

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ -----	9

2. Հարակից (ՀՀ ԿԱ ՊԵԿ գործունեության ամօրհան) օրենսդրության նշանակալի փոփոխություններ 11

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 13

3.1 Ծրագրեր և կատարողականություն (Մաքսային ծառայության մասով) -----	13
3.2 Ավանդյալ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	14
3.3 Ուսուցում, մրցույթ -----	14
3.4 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	14
3.5 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ -----	15

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 հունիսի 2012թ, ՀՕ-166-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (907), 11.07.2012թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունիսի 1-ից

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ տվյալ տեսակի գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, ինչպես նաև տվյալ տեսակի գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատերերը արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի անբաժանելի մաս համարվող համապատասխանաբար հավելվածներ NN 3-ում (Արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար) և 4-ում (Արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն անհատ ձեռնարկատերերի համար) սահմանված ձևով դիմում-հայտարարություն՝ տվյալ ամսվա ընթացքում:

Մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ՀՎՀՀ տրամադրելու օրվա ընթացքում «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ով սահմանված ձևի արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված ՀՎՀՀ տրամադրելու օրը, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին (Արտոնագրային վճարի վճարման կարգը և ժամկետները)

համապատասխան կատարել է արտոնագրային վճարի վճարում:

Սահմանվում է, որ գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատերերի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը որոշվում է դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար հաշվարկված արտոնագրային վճարի և դիմում-հայտարարությամբ ներկայացված՝ տվյալ տարվա մնացած ամբողջական ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ կամ 9 ամիս) համար հաշվարկված արտոնագրային վճարի հանրագումարի չափով:

Դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է արտոնագրային վճարի եռամսյակային չափի մեկ երրորդի և դիմում-հայտարարությունը ներկայացնելու ամսաթիվը ներառող ամսվանից մինչև տվյալ եռամսյակի ավարտը ներառող ամբողջական ամիսների թվի արտադրյալով: Դիմում-հայտարարություն ներկայացնելու ամսաթիվը ներառող ամիսն ընդունվում է որպես ամբողջական ամիս՝ անկախ դիմում-հայտարարությունը ներկայացնելու ամսաթվից:

Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 7 հավելվածում (Արտոնագրային վճարով հարկվող գործունեության տե-

սակները) նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի համար վերոնշյալ օրենքի N 8 հավելվածով (Գործունեության որոշ տեսակների համար արտոնագրային վճարի հաշվարկման ու վճարման կարգը, պատասխանատվությունը) սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով, ընդ որում, այս տուգանքի հաշվարկման համար N 8 հավելվածով սահմանված գործակիցները հաշվի չեն առնվում: Բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված սրահի համար ստացված արտոնագրերում չնշված որևէ օրվա ընթացքում գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից արտոնագրում չնշված յուրաքանչյուր օրվա համար գանձվում է արտոնագրային վճար՝ N հավելված 8-ով սահմանված կարգով մեկամսյա ժամանակահատվածի համար տվյալ վայրի մասով հաշվարկված արտոնագրային վճարի չափով:

Վերոնշյալ օրենքի 9-րդ հոդվածով (Օրենքի խախտման համար պատասխանատվությունը) սահմանված կարգով հաշվարկված տուգանքները պետական բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ արտոնագրային վճար

վճարողները մինչև գործունեություն իրականացնելը որևէ ժամանակահատվածի (տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան տասներկուամսյա ժամանակահատվածը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն:

Այն դեպքերում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների համար նախատեսված՝ Երևան քաղաքում և մարզկենտրոններում 300 մԱ և ավելի, այլ քաղաքներում և այլ վայրերում 200 մԱ և ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մԱ և ավելի մակերես ունեցող սրահներում, այդ սրահի մասով արտոնագիր տրամադրվում է տվյալ տարվա որևէ ամսվա կոնկրետ օրվա կամ օրերի համար: Ընդ որում, արտոնագիր ստանալու համար արտոնագրային վճար վճարող համարելու մասին հայտարարությունը կարող է ներկայացվել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի նախընտրած՝ արտոնագրային վճար վճարող համարվելու որևէ օրվան կամ օրերին նախորդող ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում:

Փոփոխություններ են կատարվել նաև արտոնագրային վճար վճարողների կողմից գործունեության արդյունքներից անկախ արտոնագրային վճարների հաշվարկման և վճարման չափերում՝ նախատեսվելով արտոնագրային վճարի ամսական դրույքաչափեր:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 հունիսի 2012թ, ՀՕ-168-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (907), 11.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով (Ստուգման ժամկետները) սահմանված սահմանափակումները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ իրականացվում են ակցիզային դրոշմանիշերի, հսկիչ նշանների

(դրոշմապիտակների) և հսկիչ-դրամարկ-դային մեքենաների կիրառման, օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների, ինչպես նաև չճանաչված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումներ:

1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Միջազգային զարգացման այն կազմակերպությունների ցանկը սահմանելու մասին, որոնցից ստացված փոխառությունների դիմաց վճարման ենթակա տոկոսների մասով շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման առավելագույն թույլատրելի նորմա չի կիրառվում» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 մայիսի 2012թ, N 648-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 28 (902), 06.06.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2012 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է միջազգային զարգացման այն կազմակերպությունների ցանկը, որոնցից ստացված փոխառությունների դիմաց վճարման ենթակա տոկոսների

մասով շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման առավելագույն թույլատրելի նորմա չի կիրառվում:

Փաստաթուղթ	«Մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	31 մայիսի 2012թ, N 692-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 29 (903), 13.06.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է մինչև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը, որի իմաստով մինչև «Եկամտային

հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա՝

1. պաշտոնային դրույքաչափային աշխատավարձը որոշվում է գործատուի կողմից 2012 թվականի աշխատած լրիվ (ամբողջա-

կան) ամիսների ընթացքում վարձու աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) և այդ աշխատավարձի ստացման լրիվ (ամբողջական) ամիսների թվի հարաբերությամբ:

2. Ժամային կամ գործավարձային դրույքաչափերի հիման վրա հաշվարկվող աշխատավարձը որոշվում է գործատուի կողմից 2012 թվականի ընթացքում վարձու աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) և այդ աշխատավարձի ստացման համար վարձու աշխատողի կողմից կատարված աշխատանքի միավորների թվի հարաբերությամբ:

«Յայտաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Փաստաթուղթ	«Յայտաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	07 հունիսի 2012թ., N 715-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 30 (904), 20.06.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ՀՀ կառավարության 15.03.2007թ. «Օգոստիսի 2-րդ քայքայող նյութերի ցանկը հաստատելու և ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին» N 327-Ն որոշմամբ հաստատված օգոստիսի 2-րդ քայքայող նյութերի ցանկում լրացվում է բրոմբլորմեթանը (CH₂BrCl)՝ 2903 49 300 ԱՏԳԱԱ-ով:

մանելու մասին» N 327-Ն որոշմամբ հաստատված օգոստիսի 2-րդ քայքայող նյութերի ցանկում լրացվում է բրոմբլորմեթանը (CH₂BrCl)՝ 2903 49 300 ԱՏԳԱԱ-ով:

Փաստաթուղթ	«Յայտաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	31 մայիսի 2012թ., N 681-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 29 (903), 13.06.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվ դուրս գրելու իրավասություն ունեն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվող այն անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները, որոնք, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի N 2 հավելվածին (ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը) համապատասխան, հարկային մարմնից ստացել են էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ:

Մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ օրացուցային տարվա որևէ ամսաթվից սկսած՝ մինչև տվյալ տարվա ավարտն էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ կարող են դուրս գրել այդ ժամանակահատվածում հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված անձինք, ինչպես նաև այն անձինք, ովքեր սահմանված կարգով ներկայացնելու են հայտարարություն

այդ ամսաթվից սկսած մինչև օրացուցային տարվա ավարտն իրենց ԱԱՀ վճարող համարելու կամ հայտարարություն՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու վերաբերյալ: Սահմանվում է, որ ինտերնետային կապի մի-

ջոցով իրական ժամանակում հարկային հաշիվներ դուրս գրելու իրավունք ունեն Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման կարգի 6-րդ և 10-րդ կետերով սահմանված պայմանները բավարարող անձինք:

Փաստաթուղթ	«Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրին Յայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22 հունիսի 2012թ., N 758-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (906)դ, 04.07.2012թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է «Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրին ՀՀ անդամակցության շրջանակներում նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը: Կարգի դրույթների կիրառման ընթացքում հնարավոր խնդրահարույց հարցերի առաջացման դեպքում դրանց կարգավորման համար լիազորված անձ է համարվում ՀՀ ֆինանսների նախարարը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը, որի ընդունած որոշումները ենթակա են պարտադիր կատարման՝ վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգով նախատեսված արտոնությունները կիրառող մարմինների համար: Կարգը կիրառվում է 1994 թվականի հունիսի 30-ին թբիլիսիում ստորագրված Սևծովյան առևտրի և զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագրով

նախատեսված գործողությունների նկատմամբ: Այն չի սահմանափակում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով նախատեսված արտոնությունները: Կարգով նախատեսված արտոնությունները կիրառվում են միայն բանկի կողմից ֆինանսավորվող գործողությունների վրա:

Համաձայնագրով իրականացվող գործողությունների շրջանակներում կիրառվող արտոնություններն են՝

1. ԱԱՀ
2. շահութահարկ
3. եկամտահարկ
4. մաքսատուրք
5. պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

Կարգով սահմանվում է նաև վերոնշյալ արտոնություններից օգտվելու կարգը:

Փաստաթուղթ	«Յայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի N 753 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26 հունիսի 2012թ., N 786-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (907), 11.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2012թ. հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա

Համառոտ նկարագիր

Լրացումներ են կատարվում ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների

առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշման մեջ, որի համաձայն սահմանվում է, որ կառավարման ծառայությունների ծախսեր են համարվում

հարկատուի գործունեությունը փաստացի ղեկավարելու համար այլ անձանց կողմից հարկատուին մատուցվող ծառայությունների և (կամ) հարկատուի համար կատարվող աշխատանքների (բացառությամբ վարձու աշխատող համարվող անձանց կողմից կատարվող աշխատանքների) դիմաց այդ անձանց վճարվող գումարները (բացառությամբ կառավարման գծով խորհրդատվության և հավատարմագրային կառավարման համար այլ անձանց վճարվող գումարների):



Սահմանվում է, որ հարկվող շահույթը կամ հարկվող եկամուտը որոշելու նպատակով հարկատուի համախառն եկամտից կարող են նվազեցվել նաև ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված կառավարման ծառայությունների ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի 2 տոկոսը չգերազանցող գումարի չափով: Այս դրույթները չեն կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում նորամուծությունների ներդրման և ին-

վացիոն գործունեություն իրականացնող ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից, ինչպես նաև միջազգային վարկային (դրամաշնորհային) պայմանագրերի (համաձայնագրերի) շրջանակներում ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված կառավարման ծառայությունների ծախսերի նկատմամբ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի N 662 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Վնասթիվը և համարը	22 հունիսի 2012թ. N 792-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 33 (907), 11.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է «Ներմուծողների մոտ առկա «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման կարգը»:

Սահմանվում է, որ 2013 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում արգելվում է ՀՀ ներմուծված՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումը:

ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ մաքսա-

յին տարածք չդրոշմավորված սիգարների կամ մինչև 25000 շիշ չդրոշմավորված ալկոհոլային խմիչքների ներմուծման դեպքում օտարերկրյա պայմանագրի կողմի հետ կնքված պայմանագրի փոխարեն ներկայացվում է ապրանքներն ուղեկցող փաստաթղթերի պատճենը (փոխադրման ամփոփագիր, հաշիվ-ապրանքագիր և բեռնագիր):

Սահմանվում է, որ մաքսային մարմնում դրոշմավորման ենթակա ապրանքների՝ ուղեկցող մաքսային փաստաթղթերը (փոխադրման ամփոփագիրը) լրացնելիս «Մաքսային նշումները» մասում նշվում են ակցիզային դրոշմանիշերի տեսակը, թի-

վը, դրանց ստացման հաշիվ-ապրանքագրի համարն ու տալու օրը, բացառությամբ սիգարների և 25000շիշ ալկոհոլային խմիչքների ներմուծման դեպքերի:

Ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի «Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերը կիրառությունից հանելու և այդ դրոշ-

մանիշերով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» N 611-Ն որոշման 2-րդ կետը, որով սահմանվում էր, որ 2012 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված կամ Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ «2008» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված արտադրանքի իրացումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1773-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	12 հուլիսի 2012թ, N 839-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (908), 81.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2012 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հարկ վճարողների կողմից սպառողներին գազի, էլեկտրական էներ-

գիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու մասին» N 1773-Ն որոշումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	12 հուլիսի 2012թ, N 840-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (908), 18.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի կառուցվածքում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Ապարանի և Թալինի ՏՀՏ-ները վերակազմակերպվել են միացման ձևով՝ միացվելով Աշտարակի ՏՀՏ-ին,
2. Մեղրիի ՏՀՏ-ն վերակազմակերպվել է միացման ձևով՝ միացվելով Կապանի ՏՀՏ-ին,
3. Նոյեմբերյանի ՏՀՏ-ն վերակազմակերպվել է միացման ձևով՝ միացվելով Իջևանի ՏՀՏ-ին,
4. Տաշիրի և Թումանյանի ՏՀՏ-ները վերակազմակերպվել են՝ միացվելով Վանաձորի ՏՀՏ-ին:



1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի կիրարկման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	11 մայիսի 2012թ, N 16
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 17 (430), 02.07.2012թ.

Համառոտ նկարագիր

Հաշվի առնելով, որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (29.11.2011թ. ՀՕ-303-Ն) ուժի մեջ է մտել 01.01.2012թ-ից, ապա անհատ ձեռնարկատերերի (ձեռներեցների) տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Սոցիալական վճարների դրույքաչափերը) 5-րդ կետի երկրորդ մասով նախատեսված սոցիալական վճարների տարբերությունը պետական բյուջե փոխանցելու (վճարում կատարելու), ինչպես նաև յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ տարեկան եկամուտների մասին հայտարարագրի հարկային մարմին ներկայացման (մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով, կամ ըստ պատկանելության հանձնման) փոփոխված ժամկետները վերաբերում են 2012թ. տարեկան արդյունքներով

անհատ ձեռնարկատիրոջ (ձեռներեցի) կողմից հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ներկայացմանը և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ մասով նախատեսված սոցիալական վճարների տարբերությունը պետական բյուջե վճարմանը:

2011թ. տարեկան անհատ ձեռնարկատերը (ձեռներեցը) սոցիալական վճարների և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ մասով նախատեսված սոցիալական վճարների տարբերությունը պետական բյուջե փոխանցում (վճարում) է մինչև 01.03.2011թ., իսկ նույն տարվա տարեկան եկամուտների մասին հայտարարագիրը հարկային մարմին ներկայացնում (մասնավորապես, էլեկտրոնային եղանակով կամ փոստով՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով, կամ ըստ պատկանելության հանձնում)՝ մինչև 01.03.2012թ.:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» համաձայնագրի շրջանակներում եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման հարցերի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	14 մայիսի 2012թ, N 17
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 17 (430), 02.07.2012թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է. եթե համաձայնագրի շրջանակներում ծրագիր իրականացնողները վարձու աշխատողի փոխարեն հաշվարկում և վճարում են սոցիալա-

կան վճարներ՝ արտացոլելով այդ գումարները գործատուի պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվությունում, ապա այդ գումարներ-

ըը նվազեցվում են վարձու աշխատողների համախառն եկամտից՝ ծրագիր իրականացնողների կողմից որպես հարկային գործակալ եկամտահարկի հաշվարկման ժամանակ, և վարձու աշխատողները սոցիալական վճարների վճարման պարտա-

վորություն չեն կրում: Այդ դեպքում ծրագիր իրականացնողների՝ իրենց վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության նպաստները վճարելու ուղղությամբ կատարված ծախսերը չեն փոխհատուցվում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններ ներկայացվող կասեցման դիմումի ձևը և դրա ներկայացման ու քննարկման կարգը, գրանցամատյանում գրանցվող մտավոր սեփականության օբյեկտների տեսակները, գրանցամատյանի վարման և դրանում գրանցված տեղեկությունների հրապարակման կարգը, ապրանքների բացթողումը կասեցնելու մասին որոշման ընդունման, իրավատիրոջն ու ապրանքներ տեղափոխող անձին ընդունված որոշման մասին տեղեկացնելու, ինչպես նաև ապրանքների բացթողումը կասեցնելու ժամկետի երկարաձգման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 02/1507 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	13 հունիսի 2012թ. N 178-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18 (431), 17.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է մաքսային մարմիններ ներկայացվող կասեցման դիմումի ձևը և դրա ներկայացման և քննարկման կարգը: Կարգով սահմանվում են դիմումի (այլ անհրաժեշտ փաստաթղթերի) ընդունման, բավարարման և հետագա ընթացքի ապահովման կարգերը:

Հաստատվում են նաև մտավոր սեփականության օբյեկտների գրանցամատյանի վարման և հրապարակման կարգը, ապրանքների բացթողումը կասեցնելու մասին որոշման ընդունման, իրավատիրոջն ու ապ-

րանքներ տեղափոխող անձին ընդունված որոշման մասին տեղեկացնելու, ինչպես նաև ապրանքների բացթողումը կասեցնելու ժամկետի երկարաձգման կարգը:

Ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանությանն օժանդակելու մասին» թիվ 02/1507 հրամանը:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի կիրառման մի քանի հարցերի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 ապրիլի 2012թ. N 15
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18 (431), 17.07.2012թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի գիշման պայմանագրով հարկային մարմինը ձեռք է բերում հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու պետական բյուջեի հանդեպ հարկ վճարողի պարտավորությունների մարմանը: Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի

գիշման պայմանագրով հարկ վճարողի պահանջի իրավունքի անցումը հարկային մարմինն չի դադարեցնում հարկ վճարողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում տույժերի և տուգանքների հաշվարկումը:

Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի գիշման պայմանագրով հարկային մարմինն անցած պահանջի

իրացմանը (մասնակի իրացմանը) համապատասխան պետական բյուջեի գանձապետական հաշիվներին մուտքագրված գումարները դիտվում են որպես նպատակային վճարումներ և դրանց հաշվին առաջնային մարվում են պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի այն պարտավորությունները, ի կատարումն որոնց կնքվել է պահանջի իրավունքի գիշման պայմանագիրը:

Պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի գիշման պայմանագրով հարկային մարմինն անցած պահանջի իրավունքը համարվում է լրիվ իրացված՝ իրավունքի անցման պահին պարտապանի կողմից հարկ վճարողի նկատմամբ առկա ամբողջ ծավալով պարտավորությունների մարման դեպքում և (կամ) պահանջի իրավունքի գիշման պայմանագրով հարկ վճարողի կողմից պետական բյուջեի նկատմամբ առկա ամբողջ ծավալով պարտավորությունների մարման դեպքում:

րությունների մարման դեպքում:

Պահանջի իրավունքի գիշման պայմանագրով պարտապանի կողմից՝ պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի պարտավորություններից ավելի վճարված գումարները ենթակա են հաշվանցման պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի այլ պարտավորությունների մարմանը կամ վերադարձման հարկ վճարողին՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Պահանջի գիշման պայմանագրով պարտապանի կողմից հարկ վճարողի պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների մարմանն ուղղված՝ համապատասխան գանձապետական հաշիվներին կատարված փոխանցումները համարվում են նաև բանկի միջոցով (եթե վճարումը կատարվել է բանկի միջոցով) կամ փոստի միջոցով (եթե վճարումը կատարվել է փոստի միջոցով) հարկ վճարողի բանկային հաշվին կատարված վճարումներ:

2. ՀԱՐԱԿԻՑ (ՀՀ ԿԱ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՎԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները տեղեկատվական ավտոմատացված համակարգերից դուրս գրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22 հունիսի 2012թ., N 771-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 32 (906)դ, 04.07.2012թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները տեղեկատվական ավտոմատացված համակարգերից դուրս գրելու կարգը, որով կանոնակարգվում են «Գույքահարկի և հողի հարկի գծով ապառքների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները տեղեկատվական ավտոմատացված համակարգերից դուրս գրելու հարցերի հետ կապված հարաբերությունները:

Սահմանվում է, որ գույքահարկ և հողի հարկ վճարողներին հաշվառող մարմինը, մինչև վերոնշյալ կարգով նախատեսված լրացուցիչ ծրագրային ապահովման միջոցի կիրառումը, տեղեկատվական ավտոմատացված համակարգի միջոցով կազմում է օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանների համար հողի հարկի և (կամ) գույքահարկի պարտավորություններ ունեցող այն ֆիզիկական անձանց ցանկերը, որոնց՝

1. | շինությունների գույքահարկի պարտավորությունները կազմում են մինչև 1 մլն դրամ (ներառյալ)

2. | փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունները կազմում են մինչև 0.5 մլն դրամ (ներառյալ)



3. | հողի հարկի պարտավորությունները կազմում են մինչև 1 մլն դրամ (ներառյալ)

4. | շինությունների գույքահարկի պարտավորությունները կազմում են ավելի քան 1 մլն դրամ

5. | փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունները կազմում են ավելի քան 0.5 մլն դրամ

6. | հողի հարկի պարտավորությունները կազմում են ավելի քան 1 մլն դրամ:

Գույքահարկ և հողի հարկ վճարողների հաշվառող մարմինը տեղեկատվական ավտոմատացված համակարգի միջոցով կազմում է՝

1. | այն կազմակերպությունների ցանկերը, որոնք օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ ունեն 2008 թվականի հունվարի 1-ին

նախորդող հաշվետու ժամանակաշրջանների համար չվճարված գույքահարկ և հողի հարկ, ինչպես նաև այդ պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու համար հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժեր և տուգանքներ,

2. | այդ ֆիզիկական անձանց ցանկերը, որոնք վերոնշյալ օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ ունեն 2008 թվականի հունվարի 1-ին նախորդող հաշվետու ժամանակաշրջանների համար չվճարված գույքահարկ և հողի հարկ, ինչպես նաև այդ պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու համար հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժեր և տուգանքներ:

Փաստաթուղթ	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օդու ներմուծման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	28 հունիսի 2012թ. N 785-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (908), 18.07.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օդու ներմուծման լիցենզավորման կարգը, լիցենզիա ստանալու մասին հայտի և լիցենզիայի ձևերը:

Սահմանվում է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը, ՀՀ բնապահպանության նախարարը, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության

սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանն են տրամադրում պահեստային կառույցների հիգիենիկ և սանիտարահամաճարակային անվտանգության, բնապահպանական և հակահրդեհային Նորմերի, ինչպես նաև «ակցիզային պահեստ» ռեժիմի պայմանների խախտումների վերաբերյալ տեղեկատվություն՝ հայտնաբերված խախտումների արձանագրման օրվանից 10-օրյա ժամկետում:

3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

Ս.թ. թվականի մայիսի 21-25-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ ռադիոակտիվ նյութեր հայտնաբերող սարքավորումների շահագործման թվով 16 մասնագետներ ք.Իսպրայում մասնակցել են Եվրոպական Հանձնաժողովի կողմից իրականացվող «Հայաստանի սահմանային կետեր» ծրագրի շրջանակներում վերապատրաստման դասընթացին:

Ս.թ. մայիսի 22-25-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները մասնակցել են Միգրացիայի միջազգային կազմակերպության Չարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Բելառուսում և Հայաստանում սահմանապահ ներկայացուցիչների համակարգի զարգացմանը» ծրագրի շրջանակներում ք.Երևանում պետական սահմանին ներկայացված մարմինների ներկայացուցիչների համար կազմակերպված սահմանապահ ներկայացուցիչների դերի և սահմանային միջադեպերի կարգավորման թեմայով դասընթացին:

Ս.թ. հունիսի 12-15-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները մասնակցել են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից ք. Թբիլիսիում տեղի ունեցած «Հարավային Կովկասում Առևտրի դյուրացում և առևտրային տվյալների ներդաշնակեցում ու մեկ պատուհանի հայեցակարգ» թեմայով երկրորդ տարածաշրջանային համաժողովին:

Ս.թ. հունիսի 18-20-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները մասնակցել են ԵՄ Արևելյան գործընկերության սահմանների համալիր կառավարման պիլոտային ծրագրի շրջանակներում ք. Մինսկում կայացած՝ առաջին գծում փաստաթղթերի անվտանգության ապահովման և ԵՄ առաջավոր փորձի փոխանակման հարցերով տարածաշրջանային սեմինարին:

Սույն թվականի հունիսի 25-29-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ք. Բոյուսելում տեղի ունեցած Համաշխարհային մաքսային կազմակերպության Քաղաքականության հանձնաժողովի հերթական 67-րդ նիստի և

Մաքսային համագործակցության Խորհրդի հերթական 119-րդ և 120-րդ նստաշրջաններին, որի ընթացքում հանդիպումներ են եղել ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմ:

Ս.թ. հուլիսի 9-12-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցը մասնակցել է Եվրոպական ուսումնասիրությունների հետբուհական ինստիտուտի կողմից ք.Վարշավայում կազմակերպված Եվրոպական հարևանության քաղաքականությանը նվիրված վերապատրաստման դասընթացին:

Ս.թ. հուլիսի 9-13-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցները մասնակցել են ԱՄՆ կառավարության կողմից ք. Բաթումիում կայացած կազմակերպված «Արտահանման վերահսկում և սահմանների անվտանգություն» խորագրով հայ-վրացական վարժանքներին:

Ս.թ. հուլիսի 17-20-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ թվով 10 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ Ուսումնական կենտրոնում տեղի ունեցած ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում մեկնարկած Թվինիկ գծրագրի շրջանակներում կազմակերպված «Եվրոպական միության մաքսային օրենսդրություն» թեմայով սեմինար-խորհրդակցություններին:



3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.05.2012թ-ից մինչև 20.07.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է 23 դիմում-գանգատ, որից՝

- բավարարվել է 11
- մերժվել է 7
- կասեցվել է 2
- կարճվել է 3 դիմում-գանգատ:

20.05.2012թ-ից մինչև 20.07.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից

քննարկվել է 1 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութ, որի արդյունքում 1 մաքսային ծառայող ենթարկվել է խիստ նկատողության:

20.06.2012թ-ից մինչև 20.07.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 3 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 6 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

3.3 Ռեսուրսում, մրցույթ

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության յոթ թափուր պաշտոններ համալրելու համար հայտարարվել է մրցույթ, որը կկայանա 2012թ. օգոստոսի 7-ին:

3.4 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2012թ.		
			մայիս	հունվար-մայիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-մայիս %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	74,110.6	322,987.1	104.6
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	61,384.5	263,631.0	105.3
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	31,533.4	126,513.1	102.7
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	9,713.0	51,045.7	112.6
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,841.6	34,785.6	111.7
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,729.0	10,573.3	123.0
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,402.1	8,449.9	104.1
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,320.8	7,214.6	89.4
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	4,484.8	13,008.5	96.4
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	2,359.7	12,040.3	97.3
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,008.2	8,667.9	112.9
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,717.9	50,688.2	100.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	193 270	860 305	113.9
2.1	Արտահանում	մլն դրամ	45 481	195 788	117.4
2.2	Ներմուծում	մլն դրամ	147 789	664 518	113.0

3.5 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2012թ.		
			հունիս	հունվար-հունիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հունիս %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	72,348.9	395,336.1	105.4
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	59,671.9	323,302.9	106.2
1.1.1	ՎԱՀ	մլն դրամ	28,128.8	154,641.8	103.7
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	11,364.7	62,410.5	110.3
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,355.3	42,140.9	112.5
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,311.7	12,885.1	122.2
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	2,183.5	10,633.3	108.6
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,100.0	8,314.6	84.9
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	3,700.9	16,709.5	98.6
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	3,526.9	15,567.2	110.1
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,084.6	10,752.5	110.5
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,592.5	61,280.7	100.7
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	190 167	1 050 417	112.6
2.1	Արտահանում	մլն դրամ	50 601	246 388	111.5
2.2	Ներմուծում	մլն դրամ	139 567	804 029	112.9



և մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ

եռամսյա պարբերականությամբ հրապարակվում են «Հարկատու» և «Մաքսատուն» ամսագրերը

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2012թ. հունիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1620
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1308
1.2	Իրավաբանական անձ	հատ	312
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4 913
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	143
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	1,129,238,087
5	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2012թ. հունվար-հունիս 2013
5.1	Բավարարված	հատ	1217
5.2	Մերժված	հատ	37
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	1474
6	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	16035.5
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	13907
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	263.2
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2414
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	7713.2
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	44
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	708.3
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	205
10.1	Ավարտված	հատ	34
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	34
10.3	Կասեցված	հատ	25
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	3123.7